

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 30-ի N 1621 - Լ որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1.	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ու սոցիալական ներառմանն ուղղված օրենսդրություն				
1)	ՄԱԿ-ի 2006 թվականի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացմանն ուղղված աշխատանքների իրականացում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Արտաքին գործերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Կոնվենցիայի դրույթների խախտումների մասին բարձրաձայնելու հնարավորությունների ամրագրում: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի վավերացված արձանագրություն:
2)	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի կիրարկումն ապահովող	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ա. 2022 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների, մատչելի պայմանների,

	ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում, մասնավորապես՝ ա. «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ, բ. «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ		բ. 2022 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ		անկախ կյանքի ապահովում, հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացառում:
3)	«Անձի ֆունկցիոնալության գնահատման» օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում, մասնավորապես՝ ա. «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշումն ուժը	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ա. 2022 թ. մարտի 3-րդ տասնօրյակ, բ. 2022 թ. մարտի 3-րդ տասնօրյակ, գ. 2022 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա հիմնված հաշմանդամության գնահատման նոր մոդելի առկայություն: Անձի ֆունկցիոնալության գնահատում առողջության, մասնակցության, գործունեության և

կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ, բ. «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչներն ու գործիքները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ, գ. «Ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24 N 1535-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ				միջավայրային գործոնների համատեքստում: Ֆունկցիոնալության գնահատման կարգի և չափորոշիչների հաստատում, գնահատման գործընթացի թվայնացում, ծառայությունների որոշարկման մեխանիզմների կատարելագործում:
--	--	--	--	--

2.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի, տրանսպորտային միջոցների, տեղեկատվության մատչելիության իրավունքի ապահովում				
1)	Հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար հարմարեցված տրանսպորտային միջոցների ձեռքբերում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ, Օրենքով չարգելված այլ միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովում:
2)	Նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացում	<u>Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին</u>	Պարբերաբար	Օրենքով չարգելված այլ միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի պայմանների ապահովում, քաղաքաշինական և ճարտարապետական միջավայրի բարելավում, ֆինանսական միջոցների ծախսարդյունավետության բարձրացում:
3)	Կարևորագույն նշանակության օբյեկտների մատչելիությունն ապահովող միջոցառումների ծրագրի մշակում, հաստատում և իրականացում՝ ըստ օբյեկտների հաստատված ցանկի, տեխնիկական վիճակի հետազննության արդյունքների,	Քաղաքաշինության կոմիտե	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական կամ համայնքային բյուջեների միջոցներ՝ խոշորացված ծախսերի չափով՝ 1 օբյեկտի տեխնիկական	Շենքերի մատչելիությանն ուղղված միջոցառումներ կարևորագույն նշանակության քաղաքաշինական օբյեկտներում, որոնց գերակշիռ մասն ընդգրկված է ՀՀ կառավարության 2004

	նախագծման և շինարարության խոշորացված ծախսերի, տեխնիկական առաջադրանքի, կազմված նախագծային փաստաթղթերի			վիճակի հետազննության խոշորացված ծախսերի (ակնադիտական կամ գործիքային) համաձայն՝ շուրջ 500-1500 հազ. դրամ, 1 օբյեկտի նախագծման համար շուրջ 10000.0-15000.0 հազ. դրամ:	թվականի հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշմամբ հաստատված ցանկում
4)	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերով սահմանված պահանջներին չհամապատասխանող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների աշխատանքային ռեեստրում ընդգրկված շենքերի և շինությունների	Քաղաքաշինության կոմիտե	Չորրորդ եռամսյակ	1 օբյեկտի տեխնիկական վիճակի հետազննության խոշորացված ծախսերի (ակնադիտական կամ գործիքային) համաձայն՝ շուրջ 500-1500 հազ.դրամ:	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների գույքագրում, շահագրգիռ մարմինների մասնակցությամբ համապատասխան միջոցառումների ծրագրի մշակում

	մասնագիտական ուսումնասիրություն և տեխնիկական վիճակի հետազոտություն:				
5)	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Մոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Շենքերում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովում
3.	Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ապահովում				
1)	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների հարմարեցում հաշմանդամություն ունեցող սաների կարիքներին	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում:
2)	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի համար սեմինարների, փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների 20%-ի վերապատրաստում, այդ թվում՝ նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման

		Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)			առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ մանկավարժական աշխատանքների կազմակերպման մեթոդաբանության հարցերի շուրջ:
3)	Դպրոցների շենքային պայմանների բարելավում՝ մասնավորաբար թեքահարթակների կառուցում, սանհանգույցների հարմարեցում և այլն:	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Մարզպետարաններ	Չորրորդ եռամսյակ	Համայնքային բյուջեներ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Դպրոցներում ֆիզիկական մատչելի միջավայրի ձևավորում, գույքի համապատասխանեցում, մասնավորապես՝ թեքահարթակների կառուցում, սանհանգույցների հարմարեցում և այլն:
4)	ՀՀ Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում համընդհանուր ներառական համակարգի ներդրում, մասնագիտական և մանկավարժական անձնակազմի	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների և Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների

	վերապատրաստումների իրականացում	Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզպետարաններ Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)			մանկավարժական աշխատողների վերապատրաստում՝ նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ մանկավարժական աշխատանքների կազմակերպման մեթոդաբանության հարցերի շուրջ:
5)	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (127.654.2 հազ դրամ)	Հանրակրթական դպրոցների շուրջ 1200 ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում
6)	Միջին մասնագիտական, կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 103 պետական ուսումնական

	հիմունքներով կրթության ապահովում				հաստատություններում ընդունելության վճարովի համակարգի առնվազն անցումային միավորներ հավաքած ֆունկցիոնալության ծանր և խորը, իսկ երեխաների դեպքում նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձինք , ինչպես նաև 1-ին և 2-րդ խմբի, ինչպես նաև մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամ շուրջ 80 ուսանողների անվճար ուսուցման տեղերի հատկացում
7)	Ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի հարմարեցում և իրականացում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ուսումնական ծրագրերը մշակված են՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց գնահատված կրթական կարիքները

8)	Ուսումնական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստում ներառական կրթության հարցերի վերաբերյալ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Բուհերի գործառույթների շրջանակում ներառական կրթություն կազմակերպելու նպատակով, ԲՈՒՀ-երի դասախոսների, վարչական աշխատակիցների ներառական կրթության հարցերի վերաբերյալ դասավանդման կարողությունների զարգացում
4.	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծրագրեր				
1)	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (163,107.2 հազ. դրամ)	330 շահառուի սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրում ցերեկային կենտրոնում:
2)	Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե /545,383.7 հազ. դրամ/	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (այդ թվում հաշմանդամություն ունեցող) 600 երեխայի ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում:

3)	Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են տուն ինտերնատներում խնամվողների շուրջ 63 %/	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (2,495,868.0 հազ. դրամ)	1160 անձի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում, որից 730-ը հաշմանդամություն ունեցող անձ:
4)	Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (193,535.7 հազ. դրամ)	1880 անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում՝ որից շուրջ 582-ը հաշմանդամություն ունեցող անձ /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 31%-ը/:
5)	Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (170,000.0 հազ. դրամ)	1600 անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոններում, որից շուրջ 576-ը հաշմանդամություն ունեցող անձ /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 36%-ը/:
6)	Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	58 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի տրամադրում:

	համայնքահենք փոքր խմբային տներում:	Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)		(76,452.3 հազ. դրամ)	
7)	Տնային խնամք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (11,731.2) հազ.դրամ)	50 հոգեկան առողջության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձի սպասարկում տնային պայմաններում:
8)	Զոհված /մահացած/ և 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողների, անօթևան ընտանիքների բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում	Պաշտպանության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (468.5 մլն)	59 ընտանիքի բնակարանների գնման վկայագրի տրամադրում: Այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց զինծառայողների բնակ-կենցաղային պայմանների բարելավում:
9)	Միայնակ մայրերի հաշմանդամություն ունեցող երեխաների համար վերականգնողական ծրագրերի իրականացում /արտթերապիա, հիպոթերապիա, հիդրոթերապիա/:	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) «Հայ մայրեր» բարեգործական հիմնադրամ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Երևան համայնքի բյուջե	Հաշմանդամություն ունեցող երեխաների առողջության վերականգնում:

10)	Տեղական սոցիալական ծրագրերի իրականացում՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի պայմանների բարելավմանը	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Երևան համայնքի բյուջե (24.5 մլն) Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Երևանում հաշվառված և փաստացի բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանի և միջավայրի մատչելիության ապահովում
11)	Արցախյան պատերազմում տուժած, վիրավորում ստացած, ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինվորներին ընդգրկում համապատասխան սոցիալական ծրագրերում ըստ կարիքի:	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Երևան համայնքի բյուջե (8.5 մլն) Օրենքով արգելված այլ աղբյուրներ	Արցախյան պատերազմից տուժած վիրավորում ստացած, ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինվորների համապատասխան խնդիրները լուծելու նպատակով սոցիալական ծրագրերի իրականացում:
12)	Համագործակցության շրջանակում աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայություններ մատուցող, ինչպես նաև սոցիալական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին և այլ կազմակերպություններին աջակցությունների տրամադրում:	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	Երևան համայնքի բյուջե (18 մլն) Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀԿ-ներին, հիմնադրամներին և այլ կազմակերպություններին նյութական աջակցություն՝ իրենց ծրագրերն արդյունավետ իրականացնելու նպատակով:

5.	Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովում				
1)	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությանն ու վերականգնմանն ուղղված ծրագրերի իրականացում, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում	Առողջապահության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում նաև վերականգնողական ծառայությունների մատուցում, ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում, հատուկ և դժվարամատչելի ավտոբոշիչ հետազոտությունների իրականացում, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում
6.	Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ծառայություններից օգտվելու իրավունքի ապահովում				
1)	Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (1,999,646.6 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջ 14864 աջակցող միջոցների տրամադրում: Աջակցող միջոցների տեսականու ընդլայնում
2)	Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (11,561.6 հազ. դրամ)	Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) 28 անձի սպիտակ

	անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում				ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում:
7.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի մարզական և մշակութային ծրագրեր				
1)	«Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացում մարզերում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (774.0 հազ. դրամ) դրամաշնորհային հատկացումների շրջանակում:	Տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում
2)	Թանգարաններում, գրադարաններում մշակութային ծրագրերի իրականացում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե Մշակութային ժառանգության ծրագրի» շրջանակում	Հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցության ապահովում
3)	Տեսողությունը կորցրած հաշմանդամություն ունեցող անձանց համար Բրայլյան տառատեսակով գրքերի, ամսագրերի հրատարակում, տետրերի պատրաստում, աուդիոգրքերի ձայնագրում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Հայաստանի կույրերի միավորման հրատարակչություն» ՍՊԸ (համաձայնությամբ)	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (9,786.6 հազ. դրամ)	Տեսողության սահմանափակ կարողություններ ունեցող անձանց մշակութային կրթության շարունակականության, տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովում

4)	Արտադարձական ուսուցման կազմակերպում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (90 611.8 հազ. դրամ), օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաների համար արվեստի և արհեստների 5 ոլորտում (դեկորատիվ կիրառական արվեստ, երաժշտարվեստ, թատերարվեստ, կերպարվեստ, պարարվեստ) անվճար ուսուցման իրականացում
5)	Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ստեղծագործական ծրագրերի նպատակային աջակցություն	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործական ներուժի բացահայտում և խթանում
8.	Արտակարգ իրավիճակներում հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանություն				
1)	Հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցում՝ սեյսմապաշտպանության վարքականոնների վերաբերյալ , ուսումնական հաստատության կողմից մշակվող աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման և ներդրման	Արտակարգ իրավիճակների նախարարություն	2022 թ.	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1) սովորողների և անձնակազմի շրջանում բնակչության պաշտպանության մշակույթի ձևավորում, 2) սովորողների և անձնակազմի անվտանգության և

	ուղղությամբ մեթոդական աջակցության ցուցաբերում				ուսումնական հաստատության դիմակայունության բարձրացումն արտակարգ իրավիճակների ժամանակ, 3) արտակարգ իրավիճակների արձագանքման միջոցառումների մշակում և ուսուցում, այդ թվում՝ կյանքի փրկության, վնասվածքների նվազեցման և գույքի պահպանման
2)	Մեմբերների, զեկուցումների, վարժանքների կազմակերպում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության թեմաներով (ազդարարում, պատսպարում, տարահանում, վարքականոններ տարբեր իրավիճակներում և այլն)	Արտակարգ իրավիճակների նախարարություն	2022 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում	Անվտանգ միջավայրի ստեղծում և անվտանգ մշակույթի ձևավորում հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում
9.	Մոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև հանրային իրազեկվածության բարձրացում				

1)	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի աշխատանքների իրականացում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մարզպետարաններ	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների քննարկում պետական կառավարման համակարգի մարմինների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:
2)	Հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումներ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀԿ-ներ (համաձայնությամբ)	2022 թ.	Օրենքով չարգելված աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում՝ պատերազմի ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց) խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկության, ուշադրության բարձրացում
3)	Սոցիալական ծառայության տարածքային մարմինների սոցիալական աշխատողների վերապատրաստումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե (960.0 հազ. դրամ), օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ իրազեկման բարձրացում, համապատասխան

					ծառայությունների մատուցում: 200 սոցիալական աշխատողի վերապատրաստում:
4)	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների շրջանում հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության պահպանման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ	Առողջապահության նախարարություն	Չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանություն, կարծրատիպերի վերացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ